2138

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«01» 03 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0031-23

Ձեռնարկողը՝ ***«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ***
ք.Երևան, Թբիլիսյան խճուղի, նրբանցք 8/3

Գործունեությունը՝ ***Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու նրբանցք 8/3 հասցեում գտնվող «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի գազավորված զովացուցիչ ըմպելիքների, շշալցված ջրի և օշարակի արտադրության վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0031-23

< 01 > 03 2023թ.

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու նրբանցք 8/3 հասցեում գտնվող «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի գազավորված զովացուցիչ ըմպելիքների, շշալցված ջրի և օշարակի արտադրության վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	Գ կատեգորիա
Տեղադրման վայրը՝	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն «Մարզպետունի Քամայան Արշակի» ԱՁ-ի կողմից ներկայացված նախնական գնահատման հայտի (այսուհետ՝ **Հայտ**)՝ Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու նրբանցք 8/3 հասցեում նախատեսվում է «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի (այսուհետ՝ **Ընկերություն**)՝ գազավորված զովացուցիչ ըմպելիքների, շշալցված ջրի և օշարակի արտադրության վերազինում:

Ընկերությունը Հայաստանում գործունեություն է ծավալում 1996 թվականից և «Կոկա-Կոլա Ընկերության» միակ լիազորված շշալցնողն է: Սպառողին առաջարկում է ոչ ալկոհոլային ըմպելիքներ, մասնավորապես՝ հյութերի, նեկտարների, էներգետիկ ըմպելիքների և թեյերի լայն տեսականի, այդ թվում նաև աշխարհոչակ Կոկա-Կոլա, Ֆանտա և Սփրայթ զովացուցիչներ:

Նախատեսվող գործունեության նպատակն է վերազինման արդյունքում արտադրողականությունը հասցնել օրական 26,349 դեկալիտրի, նախկին՝ 19,677 դեկալիտրի փոխարեն:

Ընկերությունը գտնվում է Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու նրբանցք 8/3 հասցեում գոյություն ունեցող արտադրական գոտում՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված 3,129754 հա մակերեսով հողամասում, որի նպատակային նշանակությունն արտադրական է, գործառնական նշանակությունը կամ հողատարածքը՝ արդյունաբերական օբյեկտների:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 6 կետի գ ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Ընկերությունը նախատեսվող գործունեությունն իրականացնում է իր սեփականությունը համարվող Թբիլիսյան 8/3 հասցեում գտնվող

3,129754 հա տարածքում, որը տեղակայված է Երևանի հյուսիսային մասում՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում: Տարածքում առկա շինություններից են վարչական շենքը՝ 965,55 քմ, պահեստը՝ 5270,92 քմ, արտադրամասերը՝ 8389,87 քմ, կեղտաջրերի մաքրման կայանը՝ 386,41 քմ, բենզալցակայանը՝ 33,2 քմ մակերեսներով և այլ օժանդակ տարածքներ:

Ամենամոտ բնակելի շենքը գտնվում է մոտ 10 մ հեռավորության վրա: Համաձայն Հայտի՝ բնակելի շենքի հեռավորությունը կաթսայատան խողովակից կազմում է 65 մ:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են: Գրունտի սառչման առավելագույն խորությունը կազմում է 0,7 մետր: Ձյան նորմատիվային ճնշումը՝ 70 կգ/մ² է: Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:

Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է շոգ և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 24-25°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 61% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -2,9°C է, հարաբերական խոնավությունը 77% (ժ.15-ին), թույլ քամիները 2-3 մ/վրկ արագությամբ:

Նախատեսվող գործունեության և հարակից տարածքներում բնության և պատմամշակույթային հուշարձաններ, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր և կենդանիներ չկան: Ծառաթփային բուսականությունը բացակայում է:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող արտադրական տարածքում, վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն ներգրավվելու:

Ընդհանուր արտադրանքի տարածքը ներառում է պատրաստի արտադրանքի պահեստ՝ արտադրված և ներմուծված արտադրատեսակների ժամանակավոր պահեստավորման համար, արտադրական մասնաշենք, վարչական շենք, բենզալցակայան, պոմպակայան, ավտոտեխսպասարկման կայան՝ դիզվառելիքի պահպանում և լիցքավորում, կեղտաջրերի մաքրման կայան, բարձր ճնշման կոմպրեսորների տարածք, կաթսայատուն, մեխանիկական տեղամաս: Արտադրական տարածքը պարսպապատված է՝ բարեկարգված, ասֆալտապատված և կանաչապատված: Կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 120 մ²:

Ածխաթթու գազի ստացման արտադրամասը ապամոնտաժվելու է, սարքավորումները կամ վաճառվելու կամ որպես թափոն հանձնվելու են համապատասխան վերամշակող կազմակերպություններին, տարածքն օգտագործվելու է որպես պահեստ: Ածխաթթու գազն **Ընկերությունը** ձեռք է բերելու Հայաստանյան ածխաթթու գազ արտադրող այլ համապատասխան ընկերություններից:

Համաձայն նախագծային փաստաթղթերի՝ Կոկա կոլա գործարանում գործում են երեք հիմնական արտադրամասեր.

- պլաստիկ շշերի արտադրամաս (PET),
- օշարակի տարայավորման (BIB) արտադրամաս,
- ապակե շշերի (RGB) արտադրամաս:

Գործարանում առկա է երեք հոսքագիծ՝

- Պլաստիկ շշերի PET հոսքագիծ՝ արտադրվում են 0.5լ, 1.0լ, 1.5լ, 2.0լ արտադրատեսակներ (Կոկա-Կոլա, Կոկա-Կոլա առանց շաքար, Կոկա-Կոլա առանց շաքար լայմի համով, Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ, Ֆանտա էկզոտիկ, Սփրայթ և Բոն Ակվա):
- Ապակե շշերի RGB հոսքագիծ՝ արտադրվում են 0.5լ, 1.0լ, 1.5լ, 2.0լ արտադրատեսակներ (Կոկա-Կոլա, Կոկա-Կոլա առանց շաքար, Կոկա-Կոլա առանց

02543163
ՀՈՐԶԱՐԱՆ 2
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՍՊԵՐՏԻԶԻՈՆ
COMMISSION
OF EXPERTS

շաքար լայմի համով, Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ, Ֆանտա էկզոտիկ, Սպրայթ):

- Օշարակի տեղափոխում և տարայավորում BIB հոսքագիծ՝ արտադրվում են 5լ (Ֆանտա Նարինջ 1% բնական հյութի պարունակությամբ) և 10լ (Կոկա-Կոլա) արտադրատեսակներ պլաստիկ պարկերի մեջ:

Վերազինումն իրականացվելու է միայն պլաստիկ շշերի արտադրական գործընթացում՝ հետևյալ գործողությունների իրականացմամբ.

- 2 լիտր տարողությամբ արտադրատեսակների համար (Ֆանտա նարինջ, Կոկա-Կոլա, Սփրայթ) շշեր փչելու կաղապարների քանակը 10 հատից դարձվել է 20, ինչը բերելու է տվյալ արտադրատեսակների արտադրողականության կրկնակի բարձրացման:
- Շշալցման մեքենայի տեխնիկական դադարների դեպքում ողջ հոսքագիծը կանգ է առնում՝ բերելով արտադրողականության նվազման: Մինչև պիտակավորման մեքենան նախատեսվում է տեղադրել արտադրված շշերի կուտակման համար նախատեսված հատված /տարածք/, որն էլ ապահովելու է շշալցման մեքենայի կանգի դեպքում հոսքագծի մնացած հատվածի անխափան աշխատանքը՝ բարձրացնելով արտադրողականությունը:
- Նախակաղապարները, հոսքագծի միջոցով մտնում են շիշ փչող մեքենայի մեջ, տաքացվում են լամպերի միջոցով մինչև անհրաժեշտ ջերմաստիճան, որից հետո, մտնելով համապատասխան մետաղական կաղապարի մեջ՝ մոլդ, բարձր ճնշման օդի միջոցով փչվում են և ստանում վերջնական շշի տեսք:

Վերազինման արդյունքում արտադրվող արտադրատեսակի տեսակային կազմի փոփոխություն չի նախատեսվում: Ներկայիս 61 մլն լիտր/տարի փոխարեն նախատեսում է վերազինումից հետո աստիճանաբար արտադրական ծավալները հասցնել մոտ 81 մլն լիտր/տարի (816820,20 լմ³ /տարի): Որպես հումք օգտագործվող նյութերը ձեռք են բերվում Հայաստանից, ներկրվում են Վրաստանից, Ռուսաստանից, Ռումինիայից, Հունաստանից, Ֆրանսիայից և այլն:

Ընկերությունը բնական ռեսուրսներից օգտագործում է ջուր և բնական գազ, այլընտրանքային՝ դիզվառելիք:

Արտադրությունում ջուրն օգտագործվում է արտադրական, օժանդակ և տնտեսա-կենցաղային նպատակներով: Արտադրական գործընթացում ջուրը հանդիսանում է Կոկա-կոլայի պատրաստման հիմքը՝ հումքի մշակում, շշերի, սարքավորումների և տեխնոլոգիական գործընթացում՝ տարաների լվացում: Օժանդակ և տնտեսակենցաղային նպատակներով ջուրն օգտագործվում է կաթսայատան, ավտոտրանսպորտի սպասարկման, լաբորատորիայում, վարչական և սպասարկող անձնակազմի տնտեսակենցաղային կարիքների՝ ճաշարանի, հատակների լվացման, բաց տարածքների ջրցանման, կանաչ տարածքների ոռոգման համար:

Գազավորված ըմպելիքների և ջրի արտադրության համար քաղաքային ցանցից ստացված ջուրը տարբեր մշակման փուլեր է անցնում: Բոնակվա ջրի արտադրության համար քաղաքային ջուրը մշակվում է հակադարձ Օսմոսի կայանում:

Համաձայն արտադրության տեխնոլոգիական ցուցանիշների՝ արտադրանքի մեջ ջրի ծավալը կազմում է 90%: Վերազինումից հետո ընդհանուր արտադրանքը կազմելու է 816820,20 լմ³/տարի, ջուրն արտադրանքի մեջ կկազմի՝ 73513,82 լմ³/տարի՝ անվերադարձ օգտագործվող ջուր: Շշերի և տեխնոլոգիական սարքավորումների լվացման համար օրական կծախսվի 259 մ³ ջուր, 80290 մ³/տարի քանակով: Օժանդակ կարիքների համար ջրի ընդհանուր ծախսը կկազմի 45309,65 մ³/տարի, որից լաբորատորիայի ջրի ծախսը կկազմի 1060 մ³/տարի, ավտոպարկի ջրի ծախսը՝ 13936,05 մ³/տարի, կաթսայատան

կարիքների համար՝ 30313,6 մ³/տարի: Տնտեսա-կենցաղային կարիքների համար ընդհանուր ջրածախսը կկազմի 22499.29 մ³/տարի:

Ընդամենը ջրի ծախսը մինչև վերազինումը կազմում է 165,493 մ³/տարի, վերազինումից հետո այն կազմելու է 221,612 մ³/տարի:

Ընկերության ջրամատակարարումն իրականացվելու է համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության կողմից նախագծված ՎՋ6618/2022 ջրամիացման և/կամ/ ջրահեռացման տեխնիկական պայմանի:

Էլեկտրամատակարարումը կատարվում է համաձայն «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀԷՑ» ՓԲԸ-ի միջև կնքված էլեկտրամատակարարման պայմանագրի: Տրանսֆորմատորային ենթակայանում տեղադրված է 2 հատ 6/0,4 ԿՎ լարման 2000 ԿՎԱ հզորության եռաֆազ երկփաթույթ ТС տիպի, չոր մեկուսացմամբ ուժային տրանսֆորմատորներ, որոնց սնուցումը իրականացվելու է 6կվ ԲՍ-ից մալուխագծով:

Բնական գազն օգտագործվում է գործարանի ջերմամատակարարման, արտադրական գործընթացներում տաք ջրի և գոլորշու ստացման համար:

Գազամատակարարումն իրականացվում է «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի և «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի միջև կնքված բնական գազի մատակարարման պայմանագրի համաձայն: Նախատեսվում է այլընտրանքային պահուստային դիզվառելիք՝ գազի բացակայության դեպքում:

Գործարանի ներսում գտնվող կաթսայատունը շահագործվում է արտադրական, ջեռուցման և տաք ջրամատակարարման նպատակներով: Կաթսայատանը տեղադրված երկու կաթսաներից մեկը պահեստային է: Կաթսաները համալրված են գազայրիչներով և այրման ռեժիմի ավտոմատ կարգավորիչներով, ինչպես նաև անվտանգությունն ապահովող անհրաժեշտ սարքավորումներով, վթարային անջատիչներով, ձայնային և լուսային ազդանշաններով:

Կաթսայատունն աշխատում է ձմռանը 24 ժամյա ռեժիմով՝ 150 օր, ամռանը՝ 16-ժամյա գրաֆիկով: Կաթսայատունն աշխատում է բնական գազով, տարեկան միջին ծախսը կազմում է 450000 մ³/տարի: Ունի պահուստային դիզելային վառելիք՝ 10 տ/տարի քանակով, որն օգտագործվելու է գազի հնարավոր բացակայության դեպքում:

Գործարանն ապահովված է օդի ներածման և արտածման մեխանիկական համակարգերով՝ արտադրամասում և օժանդակ տարածքներում օդափոխությունը կարգավորելու նպատակով:

Գործարանում տեղադրված է 400 մ³/օր հզորության մաքրման կայան՝ նախատեսված արտադրական կեղտաջրերի՝ ՀՀերի և հատակների լվացման, լաբորատորիայի, կաթսայատան ջրերի քիմմաքրման և ածխաթթու գազի արտադրական հոսքերի մաքրման համար: Մաքրված արտադրական հոսքաջրերը ներքին ցանցով ուղղորդվում են կենսաբանական մաքրման կայան, ապա հեռացվում են դեպի քաղաքային կոյուղու ցանց:

Ջրի կենսաբանական մաքրման գործընթացից՝ թափոնաջրերի տիղմի ֆիլտրումից, առաջանում է տարեկան 3000 կգ ջրի կենսաբանական մշակման մնացորդային շլամ, որը տեղափոխվում է աղբավայր: Գործարանի տարածքից անձրևաջրերը հեռացվում են ինքնահոս դեպի կոյուղու ցանց:

Համաձայն **Հայտի՝** հողային ռեսուրսների մեջ կեղտաջրերի հնարավոր ներթափանցումը բացառված է, քանի որ գործունեության իրականացման վայրը բարեկարգված և ասֆալտապատված է, արտադրական տարածքը և թափոնների պահպանման վայրերը բետոնապատված են, արտադրամասում տեղադրված հոսքագծերն աշխատում են փակ համակարգով՝ հատուկ նախատեսված փակ տարածքներում: Վերազինման ընթացքում նոր տարածքներ չեն օտարվելու և նոր հողային ռեսուրսների խախտում կամ աղտոտում չի կատարվելու:

Համաձայն 2015թ. **Ընկերության** կողմից ամրագրված թափոնների անձնագրերի՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. հոկտեմբերի 10-ի N342-Ն հրամանով հաստատված Հայաստանի հանրապետության տարածքում գոյացող արտադրության և սպառման թափոնների ցանկի՝ գործունեության իրականացման ընթացքում առաջանում են թվով տասնհինգ վտանգավոր թափոնի տեսակներ:

Թափոնների անձնագրերը պարունակում են տեղեկություններ թափոնի քանակության, վտանգավոր հատկությունների, ծագման, կազմի, հրդեհապայթյունավտանգության, կոռոզիոն հատկությունների, ռեակցիոնունակության, վնասազերծման ու վերամշակման առաջարկվող եղանակների, տեղափոխման ընթացքում սահմանափակումների, գործածության ժամանակ ձեռնարկվելիք անհրաժեշտ նախազգուշական միջոցառումների մասին:

2021թ. ընթացքում վերամշակման և ոչնչացման է ուղարկվել թափոնների 98%-ը:

Համաձայն Հայտի՝ վերազինման արդյունքում ներկայացված թափոնների քանակական և որակական ցուցանիշները պահպանվելու են:

Գործունեության իրականացման ընթացքում առաջանում են նաև այլ կարգի թափոններ՝ ապակե կամ պլաստիկե շշեր, պիտակներ, խցաներ, հումքի և նյութերի փաթեթավորված ներկրման արդյունքում՝ պոլիէթիլենային տարրաներ և ստվարաթուղթ, կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ:

Գործարանի աղբահեռացումը կատարվում է համաձայն Երևանի համայնքապետարանի հետ կնքված պայմանագրի: Կենցաղային աղբի տեսակավորման համար **Ընկերության** տարածքում առկա է աղբի տեսակավորման մետաղյա աղբամաններ: Կենցաղային աղբը տեղափոխվում է աղբավայր՝ պայմանագրային հիմունքներով:

Տարածքի ազատ հատվածները կանաչապատված են՝ 120 մ² մակերեսով: Տարածքում առկա է խոտածածկ, դեկորատիվ ծառեր և ծաղիկներ: Վերազինման արդյունքում կանաչապատ տարածքների փոփոխություն, ինչպես նաև նոր կանաչ տարածքների ավելացում չի նախատեսվում:

Ընկերությունում փաստացի աշխատողների քանակը կազմում է 326 մարդ (վարչական աշխատողներ և ծառայողներ՝ 167, բանվորներ՝ 153, լաբորատորիա՝ 6 մարդ): Գործարանն աշխատում է 24 ժամ՝ 3 հերթափոխով, տարվա ընթացքում՝ 310 օր: Գործարանն ապահովված է սեփական ավտոտրանսպորտով՝ 165 մեքենա (41 բեռնատար, 123 մարդատար և 1 (մեկ) ավտոբուս): Առկա է ճաշարան, որը սպասարկում է օրական 210 մարդ: Արտադրամասի վերազինման արդյունքում նոր աշխատատեղեր չեն ավելացվելու:

Հայտով նախատեսվում է նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի բարձրացման և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մշտադիտարկում: Դրանք են՝

- CO, NOx մոխրի, ծծմբային անհիդրիդի, արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում,
- աղմուկի և թրթռումների մակարդակի պարբերաբար չափագրումներ՝ երկու տարին մեկ անգամ լիցենզավորված ընկերությունների կողմից,
- «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան նյութերի, տարրաների օգտագործում,
- արտադրական գործընթացում օգտագործվող ջուրը պետք է համապատասխանի խմելու ջրի որակի նորմերին,

- կաթսայատան, սարքավորումների պարբերաբար հսկում, դրանց հերմետիկության ստուգումներ, անսարք վիճակում կաթսաների աշխատանքի բացառում՝ օդային ավազանում ՍԹԱ-ի նորմաների պահպանման նպատակով, անբարենպաստ եղանակային պայմանների դեպքում վառելիքի մատակարարման սահմանափակում,
- գործող մաքրման կայանի անխափան աշխատանքի ապահովում, կեղտաջրերի հեռացման ցուցանիշների համապատասխանություն «Աէրացիա»-ի նորմատիվային ցուցանիշներին,
- հակահրդեհային պահանջների ապահովում՝ ՀՀՇՆ 21- 01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին համապատասխան,
- աշխատողների իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,
- ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերի, ՀՀ Առողջապահության նախարարության 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2"2"8-0 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջների ապահովում,
- հոսքագծերի սպասարկումը և շահագործումն իրականացնել միայն մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից,
- թափոնների կառավարում ՀՀ Առողջապահության նախարարի 29 հոկտեմբերի 2009թ. «ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆԸ ԵՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՔԻՄԻԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆԸ ԵՎ ՓՈԽԱԴՐՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ N 2.1.7.001-09 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 20-Ն հրամանի պահանջներին համապատասխան,
- թափոնների տեսակավորում, պիտակավորում ըստ թափոնատեսակի, պահպանում, կանոնավոր հանձնում, տեղափոխում՝ համապատասխան պայմանգրերի հիման վրա,
- թափոնները պահվում են հատուկ հերմետիկ փակվող տարաներում, օդափոխվող տարածքում՝ շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու նպատակով,
- թափոնների հետ առնչվող աշխատողները ապահովված են հատուկ պաշտպանիչ արտահագուստով՝ ձեռնոցներ, ակնոցներ, երկարաճիտ կոշիկներ և այլն
- էլեկտրոլիտի թափվելու կամ հնարավոր վթարների դեպքում՝ ախտահանվում և լվանում են անհրաժեշտ քանակության չեզոքացման միջոցներով՝ կիր, սոդա, ջուր,
- օգտագործվող մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում:

Պատճառաբանական եզրահանգումներ. Համաձայն **Հայտի՝ Ընկերության** գազավորված զովացուցիչ ըմպելիքների, շալցված ջրի և օշարակի արտադրության վերազինումը և շահագործումը իրականացվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են կառավարելի: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարությունը, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները, Երևանի քաղաքապետարանը, Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը: **Հայտը** լրամշակվել է նաև ստացված դիտողությունների և առաջարկությունների հիման վրա:

Համաձայն տրամադրված տեղեկատվության՝ **Ընկերությունը,** տարեց տարի ավելացնելով արտադրության ծավալները, ներդրումներ է կատարում ջրի ծախսի համարժեք նվազեցման համար: Վերջին երկու տարիներին անցել է շշերի հոսքագծերի՝ առանց ջուր օգտագործելու տարբերակի շահագործմանը, դադարեցվել է ածխաթթու գազի արտադրությունը և բարձրացվել է ջրերի մշակման համար նախատեսված հակադարձ

Օսմոսի կայանի արդյունավետությունը 15 %-ով: Ընկերությունը պարտավորվում է ընդլայնել ջրի ծախսի քանակի նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, ինչի ընթացքում հանրությունն արտահայտել է խմելու ջրի քանակի հետ կապված մտահոգություն: Համաձայն Երևանի քաղաքապետարանի տեղեկատվության՝ Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում կառուցվելու է խմելու ջրի նոր ջրագիծ և «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲ ընկերությունը հնարավորություն է ստանալու ավելացնել օգտագործվող ջրի քանակը՝ առանց հարակից բնակչությանը մատուցվող խմելու ջրի մատակարարման ծառայությունների որակի վրա բացասական ազդեցությունների:

Փորձաքննական պահանջներ

- Վերազինման ընթացքում անհրաժեշտ է հետևել տարածքի սանիտարական նորմերի պահպանմանը, նախնական գնահատման հայտով ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ:
- Նախատեսվող գործունեության ընթացքում ապահովել շրջակա միջավայրի, ինչպես նաև մարդու առողջության, անվտանգության և տեխնիկական անվտանգության ՀՀ-ում գործող նորմերի պահանջները:
- Արտադրական գործընթացն իրականացնել՝ առաջնորդվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի և ոլորտին առնչվող այլ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ սպառողների անվտանգ և որակյալ սննդամթերքով ապահովելու նպատակով:
- Պահպանել ՀՀ Առողջապահության նախարարի 06.12.2010թ.-ի՝ «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին N 27-Ն հրամանի պահանջները:
- Վերազինման արդյունքում՝ պահպանել «ՀՀ ջրային օրենսգրքով» (2002) սահմանված նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Թբիլիսյան խճուղու նրբանցք 8/3 հասցեում «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ-ի գազավորված զովացուցիչ ըմպելիքների, շշալցված ջրի և օշարակի արտադրության վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ,
առաջին կարգի մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան